ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ ԿԱՆԱԴԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ, ՈՐ Ի ՄՈՆՐԷԱԼ, ԿԱՆԱԴԱ

Սիրելի Սրբազան,

Գոհունակութեամբ տեղեկացանք, որ Կանադայի հայոց թեմի Թեմական Խորհրդի նախաձեռնութեամբ առաջիկայ յունիս 6-ին տեղի պիտի ունենա «Ցարգանքի եւ հրաժեշտի հանդիսութիւն»՝ նուիրուած Ձերդ Սրբազնութեանը, որ ծառայական նոր պաշտօնի կոչուելով՝ թողնում էք Կանադայի հայոց թեմի առաջնորդի պաշտօնը:

Սիրելի Սրբազան,

Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ ձեռնադրուելով կուսակրօն քահանայ եւ, ունենալով երջանկայիշատակ Հայրապետի Հայրական օրհնութիւնը, Դուք հովուական Ձեր առաքելութիւնը սկսեցիք Կանադայի հայոց թեմում՝ որպէս Մայր Աթոռիս երիտա-

սարդ միաբան կեանքի կոչելու Ձեր տեսիլքներն ու երազները: Այսօր արդեն Տիրախնամ թեմում շուրջ քսան տարիների ծառայութեան վաստակն է Ձեր ուսերին: Նախանձախնդիր ու անյոգնաբեկ ծառայութեամբ Դուք արժանացաք կանադահայոց սիրոյն ու գնահատանքին՝ երիցս կոչուելով թեմական առաջնորդի պատասխանատու պաշտօնին:

Ձեր գործունէութեան բարի արգասիքները տեսանելի են նաեւ Մայր Հայրենիքում, որտեղ Ձեր քաջալերանքով եւ Ձեր նախաձեռնութեամբ իրագործուեցին բարեսիրական մի շարք ծրագրեր՝ ի շինութիւն հայրենի մեր անկախ երկրի եւ ի բարօրութիւն հայրենաբնակ մեր ժողովրդի: Մասնաւոր յիշատակութեան արժանի են Կանադահայոց թեմի երիտասարդների այցելութիւնները Հայաստան CYMA-ի ծրագրի շրջանակներում, որ արդեն տասը տարիներ կեանքի են կոչուում Ձեր օրհնութեամբ ու հովանաւորութեամբ:

Սիրելի Սրբազան, շուրջ մէկ ամիս առաջ Տիրոջ կամքով Դուք ընտրուեցիք ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդի պաշտօնում, եւ Մենք ուրախ սրտով հաստատեցինք Ձեր ընտրութիւնը՝ ծանօթ լինելով Կանադահայոց թեմում Ձեր արդիւնաշատ ծառայութեանը եւ Ձեր որդիական նուիրումին՝ հանդէպ Մայր Եկեղեցին ու Սուրբ Էջմիածինը: Ձեր առջեւ այլեւս ծառայութեան նոր ասպարէզ է, առաւել ընդգրկուն ու պատասխանատու:

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական այսու Գրով Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ ի խորոց սրտի աղօթում, որ Բարին Աստուած օգնական ու աջակից լինի եւ հանապազ զօրացնի Ձեզ Ձեր կոչման մէջ՝ շարունակելու Ձեր ծառայութիւնը մեր ժողովրդի բարեպաշտ զաւակներին՝ ի զօրացում եւ ի պայծառացում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

«Այնպէս լուսաւորեսցէ լոյս Ձեր առաջի մարդկան, որպէսզի տեսցեն զգործս Ձեր բարիս, եւ փառաւորեսցեն զՀայր Ձեր որ յերկինս է» (Մատթ. Ե 16):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 27-ն Մայիսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 351